


9(47.925)

U-83



ՁԵՌԱԳՐԻ ԻՐԱՒՈՒՆՔՈՎ

Արաբական իշխանության սարածելը Հայաստանում:

Արաբները Միջագետքից և Ասորիքից սկսեցին իրանց իշխանութիւնը տարածել գէպի Պարսկաստան և միաժամանակ գէպի հիւսիս՝ Հայաստան, որտեղ արդէն իշխում էին յոյները: Դեռ Օմարի ժամանակ Ասորիքից մի արաբական բանակ մտաւ Հայաստան Տարօնով, անցաւ Բղնունիքով, Բագրևանդով Արարատեան դաշտը և պաշարմամբ վերցրեց Դւինը: Այդ ժամանակ մեռնում է Նզր կաթողիկոսը և Թէոդորոս Ռշտունին, որ հայոց հեծելազորի հրամանատար էր, զուր աշխատում է երկիրը պաշտպանել: Հայոց պատմագրի ասելով՝ արաբները 35,000 զերի հանեցին Հայաստանից, բայց երևի այս արշաւանքը աջնքան էլ չը քայքայեց երկրի տնտեսական վիճակը, որովհետև նոր կաթողիկոսը՝ Ներսէս Գ-ը կարողացաւ կարճ ժամանակում բաւականաչափ նիւթական միջոցներ գտնել և գեղեցիկ վանքեր ու եկեղեցիներ կառուցանել, որի համար և կոչւեց Շինող:

Արաբների հեռանալուց յետոյ զարձեալ երևացին յոյները և երկրի գինւորական ուժերի հրամանատար նշանակեցին Թէոդորոս Ռշտունուն, իսկ յոյն զօրքերին առաջնորդ կարգեցին մի ոմն Թումաս զօրավարին: Բայց այս երկու հրամանատարների մէջ շուտով անհամաձայնութիւններ ծագեցին, և Թումասը ձերբակալեց Թ. Ռշտունուն և ուղարկեց Կ. Պօլիս: Թէոդորոսը Պօլսում կարողացաւ արդարանալ, այնպէս որ Թումասը ետ կանչւեց, այդ ժամանակ վարազ-

տիրոց Բագրատունին Բիւզանդիայից փախաւ Հայաստան և Ներսէս կաթողիկոսի ու հայ իշխանների միջնորդութեամբ նշանակեց կիւրապաղատ: Բայց շուտով մեռաւ և նրան յաջորդեց իր որդի Սմբատ Բագրատունին, որի ժամանակ Հայաստան վերագրծաւ Ռշտունին:

Յոյները կարծես լիակատար յաջողութիւն ունէին: Կոստանդ կայսրը մի առանձին գրութեամբ պահանջեց, որ հայերը քաղկեդոնական դաւանանքն ընդունեն: Բայց Դւինի 643—8 թւի ժողովը չընդունեց այս առաջարկը: Հէնց այդ միջոցին վերջացաւ արաբների և յոյների մէջ կընքած զինադադարը. արաբներն շտապեցին արշաւել յունական երկիրները վրա: Թէոդորոս Ռին դժգոհ կայսեր քաղաքականութիւնից, շտապում է յօժարակամ ենթարկել երկիրը արաբական գերիշխանութեանը: Նա 653 թւին զաշինք է կապում Մուաւիայի հետ, որը մեծ արտօնութիւններ էր տալիս հայ իշխաններին: Արաբները պարտաւորեցին 3 տարի հարկ չըպահանջել, իսկ այնուհետև նախարարները պէտք է տուրք վճարէին ըստ իրանց: Կարողութեան: Հայերը պիտի պահէին 15,000 զօրք, որը պիտի կերակրէր Ասորիք, բայց ամիրապետի հրամանով պարտաւոր էր սահմանակից երկիրների դէմ հարկ եղած ժամանակ կուէի ելնել: Հայկական ամրոցներում ոչ մի արաբ պաշտօնեայ չը պիտի նշանակէր: Եթէ յոյները յարձակէին Հայաստանի վրա, արաբները պիտի պաշտպանէին այս երկիրը իրանց զօրքերով:

Այս դաշինքի կնքելուց յետոյ Հայաստան մտաւ Կոստանդը 100,000 զինուորներով. և հասաւ Կարին. Ներսէսը մի քանի իշխանների հետ ներկայացաւ նրան, իսկ Ռըշտունին չուզեց հնազանդւել և քաշեց Աղթամար կղզին: Կոստանդը անցաւ Դւին և այնտեղ ստիպեց Ներսէս կաթողիկոսին իր հետ միասին հաղորդւել յունական ծէսով: Բայց

շուտով Ռշտունու մօտ եկան արաբական զօրքերը և նրանք կարողացան ետ մղել յոյներին: Այդ միջոցին կայսրը վերագրծել էր Պօլիս զօրքերի հրամանատարութիւնը Մաւրիանոսին յանձնելով: 654 թւի զարնանը Թէոդորոս Ռշտունին արաբական զօրքերի հետ հասաւ մինչև Սև ծովը և առաւ Տրապիզոնը: Ամիրապետը նրան կանչեց Դամասկոս և նշանակեց կառավարիչ Հայաստանի, Վրաստանի և Աղւանքի: Դեռ դրանից առաջ յոյները փորձել էին Վրաստանը, Աղւանքը և Միւնիքը իրանց ձեռքը ձգել, բայց նրանց զօրքերը մեծ դիմադրութեան էին հանդիպել և կարողացել էին զրաւել միայն Վրաստանը: Այժմ արաբները յոյներին քշեցին նաև այդ երկրից, ապա առան կարճ դիմադրութիւնից յետոյ Կարինը և հակառակ նախարարներից պատանդներ վերցնելով հեռացան Ասորիք: Թէոդորոս Ռշտունին հետևեց նրանց մինչև Ասորիք և վախճանւեց 656 թուին: Իշխանութիւնն անցաւ Համազասպ Մամիկոնեանին:

Կոստանդը արաբական զօրքի հեռանալուց յետոյ շտապեց իր զօրքերը մտցնել Հայաստան և Համազասպ Մամիկոնեանին իր կողմից նշանակեց կիւրապաղատ: Այս բանն իմանալով արաբները սրի անցրին իրենց մօտ եղած բոլոր հայ պատանդներին: Մուաւիան, որ նոր էր գահ բարձրացել, մի գրութեամբ հայերից հնազանդութիւն և հարկատուութիւն պահանջեց: Միաժամանակ նա պատերազմ սկսեց յոյների դէմ: Այս անգամ Ներսէս կաթողիկոսը, որ մինչև Ռշտունու մահը հեռացել՝ գտնուում էր Տայքում, եկաւ Դւին և միացաւ այն իշխանների հետ, որոնք կողմնակից էին արաբներին տիրապետութեանը: 662 թւին արաբները Հայաստանի կառավարիչ նշանակեցին Համազասպի եղբայր Գրիգոր Մամիկոնեանին: Այս թւականը կարելի է համարել արաբների տիրապետութեան հաստատման թւականը Հայաստանում: Այնուհետև մօտ 30 տարի երկիրը կառավարեց տեղական իշխաններով, և ապա արաբ կուսա-

կալներով: Թէ այս շրջանում և թէ աւելի ուշ ժամանակներում հայերի և արաբների յարաբերութիւնները հիմնուած էին գլխաւորապէս Թէոդորոս Ռշտունու 653 թւին կնքած դաշինքի վրա:

Գրիգոր Մամիկոնեանը (662—683) կարողացաւ իր ժամանակի կաթողիկոս Սահակ Գ. Զորափորեցու հետ հաստատել հայոց թէ քաղաքական, և թէ կրօնական գերիշխանութիւնը Աղւանքում և նպաստել քրիստոնէութեան տարածմանը հոնքերի մէջ: 683 թւին խազիւրները յարձակեցին հայոց վրա. Գրիգոր Մամիկոնեանը սպանեց պատերազմի մէջ և նրա իշխանութիւնն անցաւ Աշոտ Բագրատունի պատրիկին: Սրա օրով յոյները աշխատեցին Կոստանդիանոսի (II) ժամանակ նորից տիրել Հայաստանին, բայց միայն պատճառ դարձան նոր և նոր աւերածութիւնների: Հայերն ուղեցին օգուտ քաղել արաբների մէջ ծագած խռովութիւններից և դադարեցին հարկ վճարելուց: Բայց Աբդլմելիք ամիրապետը յանձնեց իր եղբայր Մահմէդին, որ Ասորիքի կուսակալ էր, ճնշել հայերի ապստամբութիւնը: Խորամանկութեամբ և պատիր խոստումներով նա կարողացաւ ամրոցներից հանել հայ իշխաններին և հաւաքել իր մօտ. ապա սկսեց նրանց կոտորել, իսկ երեխաներին պատանդ վերցնել: Այդ ժամանակ կողոպուտեց և Վաղարշապատի Ս. Գրիգոր եկեղեցին, իսկ միաբաններից շատերը կոտորեցին:

Մահմէդը հեռացաւ դէպի Տիգրանակերտ, թողնելով մի ստորադրեալ պաշտօնեայ իր փոխարէն՝ Աբդլլա. այսպէս 693 թւից սկսած Հայաստանը կառավարուում է արաբ կառավարիչներով, որոնք վերջը կոչեցին դատիկաններ:

Արաբների վերաբերմունքը դէպի նախարարութիւնը բաւական տարբեր էր յունականից: Նրանք թէև երբեմն աշխատում էին ոչնչացնել նախարարական տները, բայց այդ կազմակերպութեան տեղ չը կարողացան մտցնել մի այլ պետական ձև, օրինակ այն՝ որը յունաց բաժնում հետզհետէ

խլում էր նախարարներից բոլոր վարչական իրաւունքները: Անհաւատարիմ նախարարներին կոտորում էին այս կամ այն բռնակալ ամիրապետի ժամանակ, սակայն նախարարութիւնը որպէս սիսթեմ չէր ոչնչացւում:

Աբդլլային հրամայած էր վերացնել հայկական նախարարական տները մեծ մասը. այս խորհուրդը յայտնի եղաւ Մմբատ Բագրատունուն, որը իր մօտ կանչելով տոհմակիցներին՝ համոզեց նրանց թողնել երկիրը և անցնել յունաց բաժինը: Սակայն Աբդլլան շտապեց հեռացողների ճանապարհը կտրել: Երասխի ափին, Վարդանակերտի մօտ տեղի ունեցաւ ճակատամարտը, որի մէջ արաբները յաղթեցին, և Մմբատ Բագրատունին շարունակեց իր ճանաչարհը դէպի Յունաստանի սահմանները: Այդ դէպքերի լուրն իմանալով, Մահմէդը զօրքերով շտապեց Հայաստան: Հայերն ուղարկեցին Սահակ Գ. կաթողիկոսին որպէս միջնորդ. նա կարողացաւ Մահմէդի բարկութիւնն իջեցնել. (կաթողիկոսի մահը Խառանում): Մահմէդի երկրորդ գալուստի միջոցին արաբներն աշխատեցին երկիրը խաղաղ պահել և դժգոհութիւնների առիթ չը տալ: Բայց շուտով սկսեցին նոր հալածանքներ և Մմբատ Բագրատունին, որը հեռացել էր յունաց բաժինը (Ճոռոխի հովիտը), դիմեց յունաց օգնութեան: Յոյներն ու հայերը անցան մինչև Վանանդ, որտեղ տեղի ունեցաւ ճակատամարտը. արաբները կրկին յաղթեցին: Այն ժամանակ Մահմէդը որոշեց աւելի վճուական դիրք բռնել դէպի նախարարութիւնը: Նրա փոխանորդ Կաշմը հրաւերեց հայ նախարարներին Նախիջևան և Խրամ հպատակութեան ապացոյցներ տալու համար: Բայց այն ժամանակ, երբ նախարարները եկեղեցի էին մտել, արաբները դռները փակեցին և հրդեհեցին՝ թոյլ չը տալով որևէ մէկին միջոց դուրս գալու: Իսկ ամրոցներում մնացած նախարարներին հարկադրում էին անագին փրկանք վճարելու և այդ թանկ գնով ազատութիւն և կեանք ստանալու: Այնուամենայնիւ դրան-

ցից էլ շատերը ձերբակալւեցին և գերի ուղարկւեցին Դամասկոս կամ սպանւեցին:

Այս խիստ միջոցները երկրի մէջ այնպիսի դժգոհութիւն առաջացրին, որ օրէջ օր ուժեղանում էր յունաց կողմն անցնելու տրամադրութիւնը. արաբները խոհեմութիւն չընամարեցին այս ընթացքը շարունակել և Մահմէդի փոխարէն Հայաստան ուղարկեցին Աբդլ-Ազիզին («այդ խորագէտ, լի երկրաւոր իմաստութեամբ, առասպելախօս և առակարկու, ըստ Ղևոնդ երէցի»): Աբդլ-Ազիզը մի առանձին հրովարտակով բոլոր փախած նախարարներին համոզեց Հայաստան վերադառնալ և առհասարակ իր մեղմ ընաւորութեամբ շատ շուտով կարողացաւ շահել հայերի սիրտը: Նա ընդարձակեց և աւելի ամբացրեց Դւինը՝ շուրջը նոր պարիսպ և խրամ շինելով:

Այսպէս տեեց գրեթէ մինչև ութերորդ դարի սկզբները: Հայ նախարարներից մի քանիսը սկսում էին համոզել, որ արաբական լծից ազատել շատ դժւար է, և նոյնիսկ օգուտ չունի. այդպիսիներից էին մանաւանդ այն Բագրատունիները, որոնց տոհմական ամրոցը գտնւում էր Դւինից ոչ հեռու, Դարօնքում (չին Բայազէտ), նրանք շատ շուտով թողին իրանց ընթացքը, աշխատելով մի կերպ չը գրգռել արաբ կուսակալներին և ընդհակառակը՝ նրանց սիրտը շահելով՝ բարձրանալ և խաղալ այն դերը, որ մի ժամանակ, մինչև արաբների իշխանութեան հաստատուելը, խաղում էին Մամիկոնեանները: Այնուհետև երբէք չը դադարեց Բագրատունեաց և Մամիկոնեանց տոհմերի մէջ մրցումը: Մամիկոնեանները ոչ մի կերպ չէին կարողանում հաշտել իրանց քաղաքական նշանակութեան անկման հետ և օգտւում էին ամեն մի յարմար հանգամանքից սպասամբութեան դրօշը բարձրացնելու:

Այն արաբական զօրքերը, որոնք Միջագետքից գնում էին դէպի Դւին, ապա Վրաստան և Աղւանք, մեծ մասամբ անցնում էին Տարօնով, Մամիկոնեանների կալածներով և

ամեն անգամ մեծ փաստներ հասցնում նրանց: Այս ամենը, թէ տոհմական հին աւանդութիւնները և թէ տնտեսական հանգամանքները, թոյլ չէին տալիս Մամիկոնեաններին հաշտելու արաբների տիրապետութեան հետ: Այդ միջոցին Բագրատունիները հետզհետէ աւելի հարստացան, շնորհիւ այն հանգամանքի, որ իրանց կալածքների մի խոշոր մասը գտնւում էր Ճորոխի հովտում, Սև ծովին մօտ, յունական բաժնին կպած, արաբական արշաւանքներից հեռու: Այդտեղ սպաստան էին գտնում ոչ միայն հալածուող նախարարները, այլ և փախչող գիւղացիները, որոնք խաղաղ աշխատանք: Առևտրական յարմարութիւններն ևս նպաստում էին Ճորոխի հովտի և Տայքի ազգաբնակչութեան հարստանալուն: Զարմանալի չէ, որ Բագրատունիները աւելի առատաձեռն և թանկագին ընծաներ էին կարողանում տալ արաբ ոստիկաններին: Երբ Հաշմ ամիրապետի ժամանակ Հայաստանի կառավարիչ նշանակւեց Մուանը, սա «իշխանաց իշխան» և սպարապետ կարգեց Աշոտ Բագրատունուն: Այս բանը դժգոհութիւն առաջացրեց Մամիկոնեանների մէջ, որոնցից երկու եղբայրներ՝ Գրիգոր և Դաւիթ, հրաժարւեցին Աշոտին հնազանդւելուց և ամեն կերպ աշխատում էին փասել Բագրատունիներին: Ամիրապետի հրամանով Մուանը ձերբակալեց նրանց և ուղարկեց Դամասկոս, որտեղից նրանք քսութեցին Եմէն:

Երբ Արաբիայում ծագած խռովութիւնների պատճառով Մուանը ստիպւած եղաւ Հայաստանից հեռանալ, Աշոտը մընաց երկրի գլխաւոր կառավարիչ Իսահակ արաբ վերակոչելի հետ միասին: Այդ ժամանակ Մամիկոնեան եղբայրները օգտուելով այն բանից, որ Աշոտը հայկական զօրքերով (15,000) անցել էր Միջագետք Մուանին օգնելու, վերադարձան Հայաստան: Նրանցից Գրիգորը փորձեց սպարապետ կարգել, բայց այդ չաջողւեց, իսկ նրա եղբայր Դաւիթը ամիրապետի հրամանով ձերբակալեց և սպանւեց: 748—750 թւականին հայերն օգտուելով Օմայեանների և Աբասեանների մէջ

ծագած խռովութիւններէց՝ փորձեցին ապստամբել: Այս անգամ էլ ապստամբութեան գլուխ կանգնեց Գրիգոր Մամիկոնեանը. նա կարողացաւ ոգևորել հայ նախարարներին և համոզել նրանց հանգամանքից օգտուել և ազատել արարական լծից: Նախարարները ստիպում էին նաև Աշոտ Բագրատունուն, որ իրանց հետ միանայ: Սակայն Աշոտն ապացուցանում էր որ նախարարների յոյսերը զուր են և ապստամբութիւնը մի սխալ ու անհեռատես քայլ է, որովհետև հայոց զօրքը սակաւթիւ է և անկարելի կը լինի «գերկիր հանել ի բերանոյ վիշապաց»: Նա խորհուրդ էր տալիս խոհեմութեամբ շարունակել հարկ վճարելը, Բայց ոգևորութիւնն այնքան մեծ էր, որ նրա խրատները ոչ մի ազդեցութիւն չունեցան, և ինքն էլ ստիպեց միանալ նախարարների հետ: Ապստամբները կայսեր հետ բանակցութեան մէջ մտնելով՝ ամբացան Տայքում. բայց մի փոքր ժամանակից յետոյ սկսեցին նրանց մէջ տարաձայնութիւններ, և Աշոտը հեռանալով նրանցից՝ ուզեց նորից միանալ արարների հետ: Այն ժամանակ, գիշերով երբ նա հասել էր Բագրևանդ, Գրիգոր Մամիկոնեանը իր գնդերով շրջապատեց նրա հանգստեան տեղը և բռնելով Աշոտին յանձնեց իր եղբայր Գաւթի ծառաների ձեռքը, որոնք նրան կուրացրին: Իսկ ինքը Գրիգորը անցաւ կայսրի մօտ և յայտնեց իր յաղթութեան մասին, բայց շուտով մեռաւ և ապստամբութեան գլուխ անցաւ իր Մուշեղ եղբայրը:

750 թւին Աբասեանները յաղթեցին Օմայեաններին, որոնց ձեռքին մնացին արևմտեան արաբական կալաւածները, իսկ Արևմուտքը ճանաչեց Աբասի գերիշխանութիւնը, որը իր գահը փոխադրեց Բաղդատ, հին Տիզբոնից և Բարելոնից ոչ հեռու: Աբասը 752 թւին Հայաստան ուղարկեց իր եղբայր Ջաֆարին, որը մեծ անգթութիւններով զսպեց ապստամբներին և երկիրը ենթարկեց ծանր հարկատուութեան: Այդ ժամանակ արաբական պետերը արդէն սկսել էին շտայլ

կեանք վարել և իրանց ծախսերը ծածկելու համար մեծացնում էին հարկերը: Ջաֆարը վերջ դնելով ապստամբութեան, հարկերն աւելացրեց և նոյն իսկ մեռեցներից սկսեց հարկ պահանջել ապստամբութեան շրջանի համար: Հոգևորականներին հարկադրում էին ասել մեռածների անունները և ցոյց տալ նրանց ազգականներին, որ մեռածների հարկը վճարեն: Հարկ վճարածը պէտք է վզից կախէր անաղէ դրօշ:

Յաջորդ ոստիկանների ժամանակ հարկերը կրկնապատկեցին և եռապատկեցին, մանաւանդ Հասանի օրով: Այդ պատճառով նախարարների շատերը ապստամբում էին. մանաւանդ Մամիկոնեանները: Մուշեղ Մամիկոնեանը Բագրևանդում կոտորեց հարկահաններին և ամբացաւ Արտազերս ամրոցում: Բաղմաթիւ նախարարներ նրա շուրջը հաւաքեցին: Դեիսից ուղարկած արաբական զօրքերը պարտութիւն կրեցին, և ժողովրդի մէջ սկսեց մի այնպիսի ոգևորութիւն, որ նոյն իսկ մի վարդապետ գուշակում էր մահմեդական իշխանութեան մօտալուտ վախճանը և թորդոմեան տան վերականգնումը: Շատ շուտով ապստամբների թիւը անցաւ 5000-ից: Այս անգամ էլ Բագրատունիներից մէկը, Աշոտը ուղում էր այս շարժումը զսպել, ցոյց տալով ապստամբութեան դժարութիւնները: Ապստամբներն յարձակեցին Կարինի վրա, ուր գտնւում էր արաբական մի ուժեղ գունդ: Գարնան սկզբին 30,000 արաբ եկաւ Հասանին օգնելու: Արճէշի մօտ հայկական զնդերը ջախջախելով արաբները մտան Բագրևանդ, որտեղ նրանց ղեկավարեց Մուշեղ Մամիկոնեանը: Ճակատամարտը տեղի ունեցաւ Արածանիի ակունքներից ղէպի հարաւ գտնուող Արձն գիւղի մօտ: Մուշեղը իր մարդկանցով կուռւմ ընկաւ (775 թւին): Մնացած նախարարները ցրեցին իրանց ամրոցները, որտեղեց արաբները խոստումներով հանեցին նրանց և ապա ձերբակալեցին: Այդպիսով ապստամբութիւնն ամենայն խոտութեամբ պատժեց: Այնուհետև մօտ 75 տարի երկիրը մնաց համեմա-


տարար խաղաղ վիճակի մէջ, թէև տեղ-տեղ երբեմն լուում էին բողոքի ձայներ: Այս շրջանում Շապուհ Ամատունին 12,000 մարդկանցով թողեց Հայաստանը, և չը նայած արարների դիմադրութեան՝ անցաւ Յունաց բաժինը:

IX դարու սկզբում արաբական կենտրոնական իշխանութիւնը թուլութեան նշաններ էր ցոյց տալիս. Պարսկաստանում, Աղւանից աշխարհում և Վրաստանում տեղական իշխանները ձգտում էին անկախութեան, և արաբական տէրութիւնը ամեն կողմից ենթարկւում էր վտանգի: Ահա այդ ժամանակն էր, որ Մուտաւաքիլ ամիրապետը հրաման արձակեց քանդել բոլոր նոր եկեղեցիները, չը թոյլատրել նորերի կառուցումը և ոչ մասնեղականներին պաշտօն չըտալ: Թէ այս կարգադրութիւնը և թէ հարկերի ծանրութիւնը պատճառ դարձան մի նոր շարժման, որի գլուխ կանգնեցին Բագրատ Բագրատունին, իշխանաց իշխանը, Աշոտ Արծրունին և մի քանի ուրիշ նախարարներ: Նրանք թոյլ չը տւին հարկահաններին մտնել երկիրը, այլ իրանք հաւաքելով հարկերը, տարան մինչև սահմանագլուխը և յանձնեցին արարներին: Մի ուրիշ անգամ նրանք ստիպեցին զէնքը ձեռքին հարկահաններին դուրս քշել Հայաստանից: Այն ժամանակ (850 — 851) ոստիկան նշանակեց Իւսուֆը, որը գալով Խլաթ՝ իր մօտ կանչեց Բագրատ Բագրատունուն՝ խոստանալով նրան յանձնել երկրի կառավարութիւնը, բայց յանկարծ հրամայեց շղթայել նրան և ուղարկեց Բաղդադ: Իւսուֆի զօրավարները ցրեցին զանազան գաւառներ և իրանց վայրագութիւններով (վանքեր էին կործանում) այն աստիճան գրգռեցին ժողովուրդը, որ կազմակերպեց մի դաւադրութիւն: Դաւադիրները նշանակած օրը միաժամանակ յարձակեցին արաբական զօրքերի վրա գիշերով և կոտորեցին նրանց. միաժամանակ սասունցիք Յոֆլանի առաջնորդութեամբ իջան Տարօն և Իւսուֆին պաշարեցին Մուշ քաղաքում: Իւսուֆը ուզեց ձեղքել նրանց օղակը և դուրս գնալ,

բայց ինքը և իր զօրքերից շտտերն ընկան կուում: Այս լուրն առնելով Մուտաւաքիլ ամիրապետը, մի նոր զունդ ուղարկեց Բուղայի առաջնորդութեամբ, որը նախ պաշարեց Խութի բնակիչներին, ապա անցաւ Վասպուրական և բռնեց Աշոտ Արծրունուն, նրա որդուն և եղբօրը և շղթայակապ ուղարկեց Բաղդադ: Այնուհետև անցաւ Դէին, ձերբակալեց Սիսականի տէր Վասակին և ժիրաքի հրամանատարութեամբ մի զօրագունդ ուղարկեց Թիֆլիսի վրա: Այս գնդին օգնում էր Սըմբատ Բագրատունին (Ապլարաս), որը դեռ Վասպուրականում միացել էր Բուղայի զօրքերին և այդպիսով յոյս ունէր ազատել իրան և իր տոհմը արաբական վրէժխնդրութիւնից: Ժիրաքն առաւ Թիֆլիսը 853-ի սկզբներին և նաւթով այրեց: Մօտ 50,000 բնակիչ ոչնչացան կրակի մէջ, իսկ քաղաքի Իսահակ իշխանը գլխատուեց: Բուղան անցաւ ձանարների երկիրը, ապա Աղւանք: Ամեն տեղ ձերբակալելով իշխաններին, նա վերջը ձերբակալեց նաև Սմբատ Բագրատունուն, և բոլորին ուղարկեց Բաղդադ:

Այսպէս զսպեց Հայաստանի, Սիսականի և Աղւանքի ապստամբութիւնը: 856 թւին Բուղան հեռացաւ Միջագետք: Մնացած նախարարների մէջ շուտով բարձրացաւ Աշոտ Բագրատունին, Ապլարասի որդին, որը իր հաւատարմութեամբ կարողացաւ գրաւել ամիրապետի վստահութիւնը և նշանակեց իշխանաց իշխան: 887 թւին նա ստացաւ թագաւորի տիտղոսը:

Faint, illegible text, likely bleed-through from the reverse side of the page. The text is arranged in several lines and is difficult to decipher due to its low contrast and the age of the paper.







Հայաստանի Ազգային գրադարան



NL0432561

6023